



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐԶԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 83

22 ՓԵՏՐՈՒԱՐ 1913

ԽՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱՐԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ











# ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐԾԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ  
ՇԱՔԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Երրորդ տարի Գ 22 Փետրուար 1913 Գ Թիւ 83

«Սրբազան Բանաստեղծական Պոետ Ժ. Կր մաղթէ որ Կաթողիկէ Արձագանց շաբաթները շա-  
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդաց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա  
տարէ, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համա,  
Սրբազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթները, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,  
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

## Ք Ա Ր Ո Չ ՅԻՍՈՒՍԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՅ ՎՐԱՅ

(Շար.)

Իր առջեւը պարզուած կը տեսնէ (Փրկչին հոգին) յատկապէս ամէն մէկ մեղաւորի պատ-  
մութիւնը. այն աղէտալի վայրկեանէն, որ  
ձեր հոգին աղտեղած տեսաւ, մինչեւ այսօր  
անցուցած կեանքերնուդ սարսափելի արարք-  
ներէն եւ ոչ մին կը վրիպի իր տեսութենէն,  
ո՛վ ունկնդիրներ, կը տեսնէ այն ամօթալի  
կիրքը որ ամէն հասակի մէջ հետեւած է ձե-  
զի, եւ ապականած է ձեր կենաց ընթացքը.  
կը տեսնէ իր շնորհները՝ ձեր սրտին մէջ  
միշտ ապարդիւն մնացած. իր լոյսերը՝ միշտ  
մերժուած. ձեր վիճակը, ձեր ազնուատուհ-  
մութիւնը, ձեր բարիքները, ձեր տաղանդ-

ները, որ իր առատաձեռնութեան պարգեւ-  
ներն են, սրտերնուդ անկարգութենէն՝ ձեր  
ամէն ոճիրներուն աղբիւր եւ առիթ եղած. կը  
տեսնէ ձեր խղճին թաքուն անդունդները,  
զորս այս փրկութեան օրերուն մէջ յայտնե-  
լու երթալէ այնքան կը վախնաք՝ այդ վատ-  
թար ամօթէ յառաջ եկած անհանգստութիւն-  
ները, խռովութիւնները. որ զձեզ կը տա-  
րուբերեն՝ պարտքի եւ անտախտի մի-  
ջեւ. կը տեսնէ ձեր հոգին ինչպէս որ է հի-  
մայ, դարձի գալու թերեւս մղուած, խղճի  
բուռն խայթերով խռոված. եւ սակայն իր  
չղթաները փշրելու որոշում ընելու անկա-  
րող. ոճիրէն պարտասած, բայց առաքինու-  
թեան փարելու ուժէն զուրկ ու թափուր.  
աշխարհէ յափրացած՝ այլ անկէ հրաժարելու  
անատակ, թշուա՛ն իր անհաւատարմութեան  
մէջ. բայց միշտ անհաւատարիմ. ի՞նչ ըսեմ.  
խորապէս զգածուած այս սուրբ օրերուն հան-



դիտարկութեանն՝ սակայն մօտ թերեւս այս ահեղ խորհուրդներուն և այս ապաշխարութեան ժամանակին մէջ լսած՝ ճշմարտութիւններուն արդիւնքը յանգեցնելու լոկ սրբապղծութեան և պատեքի մը, որ ձեր միւս բոլոր ոճիրներուն չափը պիտի լեցնէ :

Ահա՛ այն ամէն արհաւիրքները, որոնց տակ ընկճուած կը գտնուի այս ամենասուրբ հոգին իր Հօրը առջեւ : Արեւի արեան հեղումէն ի վեր տիեզերքի մէջ գործուած ամէն սև վրէժխնդրութիւն : Աստուծոյ որդւոց՝ մարդկան զստերաց հետ ըրած ամօթալի ամուսնութիւններէն հետէ կատարուած ամէն անճոռնի, հրէշային լկտութիւններ : Կայնի զաւակաց՝ քաղաքներ շինելու, և երկաթն ու պղինձը մեծարանաց արժանի կուռքեր ձկատելու սկսելէն ի վեր տեղի ունեցած ամէն գարշելի ամբարշտութիւն : Նոյի զաւակներուն՝ երկինքի դէմ չէնք մը թարծրացնելու ձեռնարկելէն հետէ խօսուած ամէն հայհոյութիւններ : Քամայ՝ սուրը Նահապետին խորհրդաւոր պիտութիւնը ծանակելէն ի վեր ի գործ դրուած ամէն հայրազաւ անօրէնութիւններ : մէկ խօսքով, աշխարհիս վրայ, անցեալ կամ ապագայ դարերու տեւողութեան մէջ, երեւան եկող ամէն հրէշներ, այս սարսափելի վայրկեանին, կը ցցուին այս անմեղ հոգւոյն դիմացը : Ահա՛ այս սոսկալի իլաչին տակ կը խոնարհեցնէ իր սրբազան Գլուխը : ամէն մարդոց ամէն ոճիրները իրեն ոճիրները կ'ըլլան : անօրէնութեան աշխարհ մը կը կրէ : բայց աշխարհ մը՝ իր խօսքին զօրութեամբ կրածէն հազար անգամ աւելի ծանր : որովհետեւ տիեզերքը կրելը՝ իրեն համար զրօսանք մըն է, կ'ըսէ Ս. Գիրքը : մինչդեռ հոս կը վանդատի մարգարէին բերնով թէ՛ մեղաւորները իմ լուծա ծանրացուցին, թիկանցս վրայ դրին իրենց ոճիրներուն բեռը, և իսկ չկրցայ տանիլ :

Մեղքէն այնքան չսոսկալնուս երկրորդ պատճառն է մեր եռանդին նուազութիւնը : Շատ չենք զգածուիր Աստուծոյ եղած անարգանքներէն : Ինչու որ զինքը շատ չենք սիրեր : որովհետեւ սէրը ցաւին չափն է : մենք լոկ մեր սեփական շահերուն, մեր փառքին,

մեր հաճոյքներուն, մեր հարստութեան մասին զգայուն ենք : որովհետեւ միայն ինքզինքնիս կը սիրենք : և աս մանաւանդ մեծերուն մոլութիւնն է : Մեզի համար Աստուծոյ փառքը լոկ պարզ հայեցողութիւն մըն է : որ մեր սրտին մէջ իրական և ազդու տպաւորութիւն մը չի ձգեր : ուստի մեր հրպատակները բաւական է որ հաւատարիմ ըլլան իրենց պաշտօններուն մէջ, եռանդուն՝ մեր շահերուն նկատմամբ, յարած՝ մեր անձին, ուշադիր՝ զմեզ գոհացնելու : այլևս փոյթ չէ թէ ապրին անբարոյական, անկարգ եղանակաւ, առանց երկիւղածութեան : այս ամէնը բանի տեղ չենք դնել :

Բայց Փրկչին ամենասուրբ հոգին որ լոկ իր Հօրը փառքը կը խնդրէ և զանիկայ կը սիրէ անհուն և բոլոր Գերորէից սէրէն աւելի վառ և բորբոք սիրով, ահ, կը զգայ ուժգնակի անոր ծայրագոյն մեծութեան եղած ամէն անարգանքները : Դաւթի ցաւը՝ աշխարհի օրինազանցութեան վրայ, Նոյի վիշտն ու նախանձայուզութիւնը՝ Իսրայէլի գայթակղութեանց և կոպակաշտութեան մասին, Նրեմիայի տխրութիւնն ու արտասուքը Նրուսաղէմի անհաւծադարմութեանց համար, լոկ տկար օրինակներ էին Փրկչին հոգւոյն տըխրութեան՝ ի տես ամէն մարդոց ոճիրներուն : որչափ աւելի կը սիրէ այնչափ աւելի կը կրէ : և որովհետեւ իրեն սէրը անհուն է, իր վիշտն ու տառապանքն ալ անչափ, անսահման են :

Ո՛հ, երբեմն կը փափաքինք գիտնալ թէ անկեղծօրէն Աստուծոյ դարձե՛ր ենք թէ ոչ, իր սիրոյն և շնորհաց մէջ կ'ապրինք թէ ոչ : Գիտնա՞ թէ ոչ ոք՝ գիտէ իր սիրոյ կամ տեւութեան արժանի ըլլալը : բայց աշխարհիս վրայ այս մասին ըստ կարեւոր կրնանք ապահով ըլլալ մենք մեզի հարցնելով թէ՛ արդեօք այն գայթակղութիւնները, որ ամէն օր մեր առջեւ կը գործուին, զմեզ կը վշտագնեն և զմեզ ցաւով կը խոցեն : արդեօք ամբարիշտներու խօսքերը, անառակութիւնները աշխարհասէր մարդոց, որոնց մէջ կ'ապրինք, եկեղեցւոյ աղէտները, տաճարներու և սեղաններու պղծութիւնները, հանրային անհամեստութիւնը, բարուց ապականութիւնը



ձեր սիրտը դառնութեամբ կը լեցնեն՝ եթէ կը տեսնենք անխռով աչքով մեր եղբայրներուն մոլորիլը և անարգելը զԱստուած որուն կը պատկանին, եթէ տեսակ մը հաճոյք իսկ կը զգանք անոնց հետ կենակցելէն, չենք սիրեր: Երբ մէկը զԱստուած կը սիրէ, անոր փառաց չանկրէն կը զգածուի. և սէրը՝ որ իր սիրելւոյն եղած անարգանքը չի զգար, լոկ եղեռնաւոր անտարբերութիւն մըն է, որ աւելի կը նմանի ատելութեան քան թէ սիրոյ:

Վերջապէս, մեր՝ մեղքէ այնքան չսոսկալուն վերջին պատճառը սուրբ չըլլալնիս է: Որովհետեւ մեղաւոր կը ծնանինք, կ'ընտելանանք, ծնանելու ատեննէս, ոճիրի գաղափարին. կը նկատենք մեղքը, այսպէս ըսելու համար, մեղաւոր աչքերով. և այնքան քրատմանի չերեւիր մեզի ան որովհետեւ մենք շատ չենք սոսկար երբէք այն բանէն որ մեզի կը նմանի: Բայց Փրկչին ամենասուրբ հոգին իր յետին տալնապի պահուն, ո՛հ, ոճիրին ահնակէց չարութեան դէմ զինքը զօրացնող բան մը չգտներ ինք իր մէջ. այս հոգին, բոլոր երկնային իմացականութիւններէն մաքրագոյն և պրքագոյն, մէկէն կը տեսնէ ինքզինքը մեր ամէն անօրէնութիւններովը թաթաւեալ՝ այնպէս որ աստուածային պարկեշտութեան մը աչքերով, կը տեսնէ ինքն իր վրայ իսկ մեղաւորներուն ամենէն ամօթալի անպարկշտութիւնները. գթութեան աչքերով կը տեսնէ ինքզինքը անոնց ատելութիւններովն ու կատաղութիւններովը թխացած, սեւցած. ամենէն ջերմ բարեպաշտութեան աչքերով կը տեսնէ ինքզինքը աղարթեալ անոնց ամբարջութիւններովը և հայհոյանքներովը. մէկ խօսքով, նոյն ինքն առաքինութեան աչքով կը տեսնէ ինքզինքը թաթաւեալ անոնց ամէն մոլութիւններով:

Ո՛հ, այլ ևս չի կրնար ահա՛ ինքզինքը նկատել եթէ ոչ անբացատրելի սոսկումով. այլ ևս չի կրնար ինք իր տեսքին դիմանալ. և կը սկսի ինչալ նուազման և մահաբեր տխրութեան մէջ. Սկսաւ սրսմել եւ հոգալ, (Մտթ. ԻԶ. 37): Ո՛հ, կը փափաքի գոնէ մէկ զի դարձնել իր անմեղ ակնարկները այդ զարհուրելի առարկայէն. բայց Հօրը արդա-

րութիւնը զինք կը ստիպէ ատով զբաղելու, և զինքը իրբեւ բռնի ատոր կը յարէ. սաստիկ լոյս մըն է որ կը հետեւի իրեն, և թոյլ չի տար որ հեռացնէ վայրկեան մը իսկ իր ներքին ակնարկները այն համակ թշնամալից կերպարանքէն որ զգեցած է. և անշուշտ կ'անչնչանար այս վշտերու խստութեան տակ եթէ Հօրը արդարութիւնը զինքը չպահէր աւելի երկարատեւ տանջանքներու և աւելի հանդիսաւոր զենման մը:

Դուք, որ ինծի մտիկ կ'ընէք, կը տեսնէ՞ք զՅիսուս որ իր ամենասուրբ հոգին գրեթէ կ'աւանդէ ցաւահար, ուժաւալաւ և համակուած այն սարսափով, զոր կ'ազդէ մեղքը երբ աստուածային լոյսով նկատուի: Ահա օրինակը այն ցաւին, զոր ունենալու էք երբ այս վրկութեան օրերուն մէջ գաք ապաշխարութեան ատենանք, յԱստուծոյ՝ ձեր ոճիրներուն դէմ զայրացած արդարութիւնը հաշտեցնելու: Յիսուս իր հոգեվարքին մէջ օրինակ է ապաշխարողներու. բայց սակայն դուք անթաշ աչքով, և հանգաւոր, ու աւելի խոստովանելու ամօթէն քան խոստովանելիք անկումներնուդ բազմութենէն և ծանրութենէն զգածուած սրտով պիտի մօտենաք. պիտի պատմէք մեզի, անտարբեր դէպքերու պէս ձեր կեանքին քստմնելի պատմութիւնը. և մենք Աստուծոյ խօսքին բովանդակ ուժգնութեան պէտք պիտի ունենանք զձեզ ձեր մահաքուն թմբրութենէն արթնցնելու համար. զձեզ քիչ մը զղջման շարժելու համար. և հարկ պիտի ըլլայ վրձիլ, հակառակիլ, պաղատիլ, ողորել, նոյն իսկ կանոնները թոյլցնել, դարմանը ձեզի հաճելի ընելու համար. և եթէ ուզենանք ակնրեւ ցոյց տալ ձեզի խղճեմուդ ողբալ, վիճակը, և զձեզ ստիպել՝ խելու այն աչքը որ զձեզ կը գայթակղեցնէ, հեռանալու ոյն առիթէն որ զձեզ կորստեան կը մատնէ, պիտի ընդդիմանաք, պիտի տրանջէք, պիտի ամբաստանէք զմեզ իրբեւ խղճմանք խոփուլ և մեղաւորները յուսահատութեան մատնող: Ո՛վ Աստուած, ա՛յսպէս կ'ըլլայ զքեզ հաշտեցնել. ասոնք են ապաշխարութեան սուրբ տագնապները. և երբ քու շնորհդ կ'ազդէ,



փղձկեալ հոգւոյ մը այն բուն և ուժգին տը-  
պաւորութիւնները, որ դարձը կը կանխեն,  
եկեղեցւոյ հրեշտակները, հաշտութեան պաշ-  
տօնեաները, ունիւն մի' թէ այլ պաշտօն, ինչ-  
պէս այսօրուան միսիթարիչ հրեշտակը, զոր  
կ'առաքես քու Որդւոյդ, քան կազդուրել մե-  
ղաւորը՝ զղջագին ապաշխարութեան մէջ,  
սփոփել անոր ահռելի ցաւերը, սրբել անոր  
արցունքը, չափաւորել ծայրաստիճան վիշաք,  
և առանց զանիկայ հեղգութեան մղելու կամ  
անոր հպարտութիւնն ու ապստամբութիւնը  
վհատեցնելու մեղմել ամոքել անոր բաժակին  
դառնութիւնը անոր կորանքին ամօթը:

Ահա՛, եղբայրներ՛ր, Փրկչին հոգեւարքին  
երկրորդ պարագան, ամօթը, որով Հայրը  
զինք կը համակէ. յետին կորանք, զոր Հօր  
արդարութիւնը կը պահանջէ իրմէ, մեղքին  
հպարտութիւնը քաւելու, այսինքն անոր  
երկրորդ անկարգութիւնը ուղղելու համար:

Որովհետեւ 1. կը կորանայ իր աշակերտ-  
ներուն մտքին մէջ, որ կը տեսնեն իր ահ  
ու դողը և ուժաբեկութիւնը: Իր ամենա-  
սուրբ հոգին կը կորսնցնէ անոնց առջեւ իր  
բովանդակ անդրդուելի արիւթիւնը՝ ի տես  
մահուան. ինք՝ որ զանոնք այնչափ անգամ  
նեղութիւն կրելու խրախուսած էր, այսօր  
իր օրինակներով կը հպկասէ իր վարդապե-  
տութեան. կը հարկադրուի իր երկիւղն ու  
սրտմուծիւնը հրապարակաւ խոստովանելու.  
անոնց օգնութիւնն իսկ կը խնդրէ և կը պա-  
ղատի որ զինք չթողուն իր ուժաբեկութեան  
և ծայրաստիճան վշտերուն մէջ. Կացե՛ք այս  
եւ սկեցե՛ք բնդ իս: (Մտթ. ԻԶ. 38):

Ո՛հ, եղբայրներ՛ր, Պետրոս կրնա՞յ դեռւս  
զՔրիստոս այս կերպարանքով Որդի Աստու-  
ծոյ կենդանւոյ խոստովանիլ. արդէն իսկ  
զազտնաբար յետս չի՞ կոչեր իր փառաւոր  
զաւանթիւնը. և հոս չի՞ սկսիր, իր տա-  
րակոյններով և իր յանկարծախաբ զարման-  
քովը ուրանալու իր աստուածային Տէրը:  
Ահա՛ այն ամօթը որուն ենթարկուելու ըս-  
տիպուած է Փրկիչը. չի շատանար մեր ու-  
ճիրները իր վրան աւանդով, այլ անոնց բո-  
ւմանդակ ամօթն ալ վրան կ'առնու. և մենք  
կ'ուզենք, որ մեր ապաշխարութիւնն իսկ

մեզի պատիւ բերէ մարդոց առջեւ. մեր ըս-  
տըջանաց ձեռնարկներուն մէջ անգամ հան-  
րութեան համարումը հայթայթելու կը ջա-  
նանք. մեզի կորանք բերող ամէն բանէ կը  
խորշինք իրրեւ անխոհեմութենէ կամ ծայ-  
րայեղ եռանդէ. առաքինութեան համար շատ  
կը համարինք կատարել այն պարտքերը, զորս  
աշխարհ կը գնահատէ. մարդոց համարումը  
փնտռեր էինք մեր խոտորումներուն մէջ.  
նոյնը կը փնտռենք նաև մեր ապաշխարու-  
թեան մէջ. և յաճախ զմեզ մեղքի մէջ ձգող  
ունայնասիրութիւնն է որ մեզի ապաշխարել  
կու տայ:

2. Կորանք հրեշտակէ մը ընդունած օգ-  
նութեան մէջ: Իր ուժաբեկութիւնը ա՛յնքան  
ծայրաստիճան է, մահուան արհաւիրքները  
իր հոգւոյն վրայ ա՛յնքան ուժգին տպաւո-  
րութիւններ կ'ընեն, կամ լաւ ևս ըսելու  
համար, իր Հօրը ձեռքը կը ծանրանայ իր  
վրան ա՛յնքան խստօրէն, մինչ հարկ կ'ըլլայ  
որ հրեշտակ մը երկինքէն իջնէ զինք սփո-  
փելու, զօրացնելու, և իրեն օգնելու ինչպէս  
Սիմոն Կիւրենացին՝ Գողգոթայի վրայ, այդ  
աներեւոյթ Խաչը կրելու. եւ երեւեցաւ նմա  
հրեշտակ յերկնից՝ եւ զօրացուցանեւ զնա:  
(Ղկա. ԻԲ. 43):

Երկինքի՛ հրեշտակներ, այս չէ՛ր ուրիշ  
անգամներ ձեր պաշտօնը. դուք իրեն կը մօ-  
տենայիք՝ լսի իրեն ծառայելու և երկրպա-  
գելու համար. այսօր ինքը ձեր վիճակէն խո-  
նարհագոյն վիճակ մը առեր է. ինք որ ամէն  
բան հաստատուն կը պահէ իր խօսքին զօ-  
րութեամբը, չի կրնար այլ ևս ինքզինքը  
կանգուն բռնել: ձեր բազկաց մէջ է՝ ահա՛  
տկա՛ր, դողդոջո՛ւն, գրեթէ հոգեսպա՛ռ, և  
իր փառքին այնքան մեծասարեր օգնու-  
թեամբ մը միայն ուժաւորած: Յիսուս չ'ու-  
զեր միսիթարուիլ իր աշակերտներէն. բայց  
չի մերժեր զինք միսիթարող հրեշտակը: որ-  
պէսզի մեզի սորվեցնէ թէ՛ մեր վշտերուն  
մէջ պէտք չէ որ միսիթարուելու ջանանք  
մեզի կարեկցութիւն ցոյց տուող մարդոց սը-  
նոտի խօսքերով, այլ՝ բարեպաշտութեամբ և  
միաւնութեամբ Տիրոջ պաշտօնեաներուն, որ  
մեր առջեւ կը գնեն իր մեզի նկատմամբ ը-



րած տրամադրութեանց իմաստութիւնը և արդարութիւնը . որպէսզի մեզի սորվեցնէ թէ Տէրը նախանձախնդիր է յաւէտ վըշտակիր հոգւոց հաւատարմութեան . թէ հաւատաքի և կրօնքի սփոփանքներէն ուրիշ սփոփանք փնտռելը՝ մեր փառքը նսեմացնել է . թէ լուծեան մէջ կը կայանայ վշտակիր հոգւոյ մը բովանդակ արդիւնքը . թէ մարդոց կարեկցութիւնը շարժելու համար , մեր վիշտերը անոնց յայտնելով , կը յայտնենք , այսպէս ըսելու համար , Աստուծոյ մեզի աւանդած գաղտնիքը , և կը զրկուինք զանոնք իրեն յայտնելու և իրմէ մխիթարուելու իրաւունքէն :

Վերջապէս կորանք իր աշակերտներուն քնոյն և փախստեան մէջ : Իր հոգեվարքին տեսարանը անոնց սիրտը չի շարժեր . անտարբեր աչքերով կը տեսնեն իրենց ամենաբարի Տիրոջ՝ մահուան դէմ կռուիլը և կը ննջեն հեղգօրէն . հարկ կ'ըլլայ որ Փրկիչը երեսնին զարնէ իրենց անտարբերութիւնը : Այդպէս չկրցա՞ք ժամ մը ինծի հետ արթուն կենալ , կ'ըսէ անոնց . Այդպէս ո՞չ կարացե՞մք ժամ արբուն կալ ընդ իս : (Մատթ. 12. 42) :

Կը տատապի միայնակ . կարծես ամէն բան , նոյն իսկ իր սիրելի աշակերտները իր Հօրը արդարութեան նպաստամատոյց կ'ըլլան : Ո՛հ , մենք ա՛յնքան զիւրազգած ենք մեր բարեկամներուն հաւատարմութեան մասին . ամենափոքր ուժացումը զմեզ կը վիրաւորէ . ամենաթեթեւ անուշադրութիւնը սրտերնիս կը դառնացնէ . ամէն օր կը գանգատինք թէ մեզի ամէնէն աւելի երախտապարտ եղողները մեր չահերուն կը հակառակին . սորվինք Յիսուսէն բան մը չակնկալել արարածներէն , նոյն իսկ բարիքի փոխարէն լոկ ապերախտութիւն ընդունիլ : Մանաւանդ որ մարդիկ կերպով մը իրաւունք ունին մեր երախտիքը մոռնալու կամ մեզի այնքան շնորհապարտ չըլլալու . որովհետեւ հասարակօրէն յաւէտ ունայնասիրութենէ քրմահաճոյքէ , չահախնդրութենէ քան բարեկամութենէ շարժած կը գործենք . անոնց բարիք ընելով մեր շահը կը փնտռենք : Բայց Յիսուս , իր առաքեալները ընտրել էր լոկ

անոնց նկատմամբ ունեցած սէրէն զրդուած . և անոնց ապերախտութիւնը ա՛յնքան աւելի կորացուցիչ է որքան աւելի անկեղծ եղած էր իր անոնց նկատմամբ ունեցած գութն ու սէրը :

(Շարունակելի)

## Ս. ՊՕՂՈՍ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ (\*)

(Շար.)

Ժիշդ է թէ Քրիստոսի մարդկութիւնը սահմանափակուած է : Նախ կան Բնագանցական սահմանաւորումները : Զի , Քրիստոսի մարդկութիւնը ստեղծուած և հետեւաբար սահմանաւոր է . անհուն է ան՝ արժանապատուութեամբ , քանի որ անձնաւորապէս միացած է աստուածային անձի մը . բայց հուշաւոր է իր էութեամբ և այնպիսի կատարելութեամբ օժտուած՝ որ չի սպառեր Աստուծոյ ամբողջ կարողութիւնը : Կան նաև Տնտեսական կարգի սահմանաւորումները՝ որ կը վերաբերին Փրկչին պաշտօնին ու գերին : Քրիստոս պարտաւոր էր չարչարուիլ ու մեռնիլ փառաց մէջ դեռ չմտած , և իր արժանիքով այնպիսի բարձրացման մը տիրանալ՝ որու իրաւունք ունէր իր ծննդեամբ : Կրնան ըլլալ նաև կամաւոր սահմանաւորումները : Զմոռնանք թէ անձնաւորապէս միաւորուած չ'ազդեր ընաւ ուղղակի Քրիստոսի մարդկային բնութեան վրայ : Կրնար ան և ոչ մէկ փոփոխութիւն յառաջ բերել Ֆիզիքական սուրբ մարդկութեան մարմնոյն , հոգւոյն և մտաւորական կարողութեանց : Քրիստոս՝ իր երկրային գոյութեան համար , կամովին հրաժարեցաւ իր իրաւունքը եղող աստուածային պատիւներէն : Մի՛թէ ինք անձնութեամբ իր անհուն հեղուկ հոգեւոր սահմաններէն զորս խտրու իր վրայ կը դնէր , Աստուծոյ ներկայ խորհրդոց համաձայն , իր Փրկչի պաշտօնը : Յոյժ շահեկան հարց մըն է աս , բայց սուրբ Պօղոս միջոցը չի հայտնաբեր մեզի զայն լուծելու :

(\*) Տես թիւ 74, էջ 682 :



Երբ իր թեթեւ բոժոժներով, այն ատեն համբաւաւոր եղող ժխտական քննադատութեան խլացուցիչ խմբերգին կը մասնակցէր, Ռընան կը գրէր. «Պօղոս զուր տեղ կը պնդէ, ինք ստորադաս է միւս առաքեալներուն, ինք չէ տեսած զՅիսուս, ինք չէ լսած անոր խօսքը: Ինք հազիւ հազ գիտէ աստուածային առակները: Այն Բրիտոսը որ անձնական յայտնութիւններ կ'ընէ իրեն՝ իր իսկ ցնորքն է, ինք զինք է որ կը լսէ՝ մինչ զՅիսուս լսել կը կարծէ»: Եթէ Ռընան իր այս կաղապարող ու յեղյեղուկ հանճարով գեռ ապրէր, անշուշտ արդի քննադատութեան կողմը պիտի բռնէր: Այժմ կացութիւնը շատ փոխուած է: Այսօր կ'ընդունին թէ Պօղոս կը ճանչնար Վարդապետին կեանքն ու գործունէութիւնը, թէ՛ անոր ողուովը կը ներշնչուէր, թէ՛ հաւատարմօրէն անոր մտածումն էր որ կը ցոլացնէր ինք: Յիսուսի երկրային կեանքին մասին եղած ակնարկութիւնները նոյնքան աւելի բազմաթիւ են Պօղոսի թղթոց մէջ, որքան միւս առաքելոց գրուածներուն. բաց ի Աւետարաններէն՝ որոնց արդէն նպատակը իսկապէս Յիսուսի վարուց պատմութիւնն ընել է: Մանաւանդ թէ, բաղդատարար՝ Յայտնութեան գրքին, Կաթողիկեայց Թղթերուն, Եբրայեցւոց Թուղթին ու Գործք Առաքելոցի մէջ նուազ ակնարկութիւններ կան աւետարանական դէպքերուն՝ քան հեթանոսաց Վարդապետին տառներեք թուղթերուն մէջ: Եթէ առեղծուած մըն է սա՝ այս առեղծուածը մեզ հետ ու է առնչութիւն չունի մասնաւորապէս ու մեզ չ'իյնար զայն լուծելը: Ամենէն պարզ ու ամենէն բնական լուծումը սա է թէ, բոլոր այս գրութիւնները, որոնք հաւատքին սկզբանց տեղեակ եղող Բրիտոնեաներու կ'ուղղուին, պատահաբար միայն կը խօսին հաւատքի տարրական նիւթերու վրայ, և թէ՛ կ'ենթադրեն որ ծանօթ է արդէն Յիսուսի համառօտ պատմութիւնը. այնպէս որ յաճախ անհասկանալի պիտի մնային այս ծանօթութիւններէ զուրկ ընթերցողներուն:

Նախնական Յիսուսի վարուց պատմութեան մը զոյլութիւնը, որու նիւթը ըլլար

Յիսուսի վարուց ու Վարդապետութեան գրախաւոր գիծերը, ձրի ու դատ մը պաշտպանել կարենալու հարկէն երեւակայուած վարկած մը չէ. այլ անոր գոյութիւնը ապացուցուած է անվիճելի փաստերու և ճշգրիտ վկայութիւններու վրայ յենլով, որոնց արժէքը գնահատուած է նոյն իսկ այժմու ամենէն խստապահանջ քննադատներէն: Այլուր ապացուցած ենք զայս բարոյականի մասին. հոս ուրեմն նշանակենք ինչ որ աւետարանական պատմութեան կը վերաբերի: Պօղոս ստիպուած ըլլալով Կողոսացիներու յիշեցրած ներու Բրիտոսի յարութեան Վարդապետութիւնը, անոնց կը կրկնէ իր առաջին հրահանգները, որոնք կրօնապիտութեան մը պէս ցամաք ու կուռ են. «Ձեզի կանխաւ հաղորդեցի ինչ որ ես անձամբ ընդունած էի, թէ Բրիտոս մեռաւ մեր մեղաց համար ըստ Գրոց. թաղուեցաւ ու յարձեթիւն առաւ ըստ Գրոց, ու Կեփասի երեւցաւ և յետոյ Տասներկուքին: Յետոյ մէկ անգամն երեւցաւ աւելի քան հինգ հարիւր եղբարց որոնց մէկ միտ մասը դեռ կ'ապրի և ոմանք ալ մեռած են: Յետոյ երեւցաւ Յակովբոսի, յետոյ բոլոր առաքելոց. վերջապէս, ամենէն ետքը, ինծի ալ երեւցաւ իրր անարգի մը» (Ա. Կոր. ԺԵ. 3-8; Տե՛ս, Théologie de saint Paul T. II. P. 61-66): Պօղոս մեզ կը յիշատակէ վկաներուն անունը, թիւն ու ինչպիսի ըլլալնին. երեւումներուն կարգը, մահուան, թաղումին ու յարութեան դէպքերուն որքան ճշգրտօրէն համաձայնիլը Ս, Գրոց ըսածին, և այս ամէնը՝ ճիշդ ինչպէս ինք ընդունած է, առաքելական աւանդութեանց միացնելով իր անձնական վկայութիւնը՝ որ անփոխելիութեան ու ճշգրտութեան մասին անմրցելի է: Ըստ ինքեան, Աւետարաններու մէկ քաղուածոն է՝ որ ալ աւելի զգայացունց ըրած է յիշողական արուեստի ճարտարութեամբ: Հաղորդութեան նորհրդոյն վրայ խօսած պահուն, վերջին Ընթերցմն ալ ուրուագծած էր իր հոգեցունց գեղեցկութեամբ. գիբեր էր մասնութեան ժամը. Յիսուս հաց առաւ, օրհնեց ու կրտրեց. առաւ նմանապէս բաժակը, ընթրիքն



վերջը, երկու տեսակներուն ալ վրայ արտա-  
սանեց սրբացման խօսքերը, ամեն անգա-  
մուն կրկնելով այն պատուերը՝ որ մշտնջե-  
նաւոր կ'ընէ խորհուրդը: Պօղոս այս տեղ ալ  
կը պնդէ որ ինք հաւատարմօրէն կը հաղոր-  
դէ ինչ որ ինք ալ ընդունած է Տիրոջմէ, և  
իր պատմութիւնը շատ մը կէտերու մէջ  
կ'ամբողջացնէ Աւետարանիչներու պատմածը.  
(Ա. Կոր. ԺԱ. 23-26.) Այս երկու օրինակ-  
ները հրահանգիչ են. զի, առանց ազատե-  
րու խառնաշփոթութեան, առանց յարու-  
թեան մասին եղած կասկածանաց, ճշգրիտ  
բան մը չպիտի գիտնայինք Պօղոսի պատմա-  
կան նախաւետարանի մասին: Եթէ ինք այն  
ատեն Կորնթոս գտնուած ըլլար, կամ կոր-  
սուած՝ իր թուղթը, արդեօք կարգ մը քնն-  
նադատներ չպիտի փութային տգիտութեան  
վերագրելու լուծութիւն մը՝ որ ճակատագրա-  
կան էր:

(Շարունակելի)

## ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (\*)

(Շար.)

Գ.

«Եւ Քու ամէն խօսքերուդ մէջ նշանաւոր-  
քիւնքնախաբոս բազմի»:

Անկեղծ բարեպաշտութեան մը աներկբայ  
նշաններէն մին ճշմարտութեան սէրն է: Ըս-  
տուգիւ ճշմարտութիւնն, ընկերութեան մէջ  
ապրող մարդուն, առաջին պարտականու-  
թիւնն է: Խօսքն մարդկանց տրուած է, ի-  
րենց խորհուրդներն իրարու հաղորդելու հա-  
մար. ընտելեան հաստատութեան զէմ գործ  
մի է՝ նոյնը երկրիմութեան և ստութեան  
ծառայացները: Մարդիկ որպիսի վստահու-  
թիւն կրնան ունենալ իրարու հանդէպ, եթէ  
ճշմարտութիւնն անոնց ընկերութենէն վը-  
տարուի, և եթէ լեզուն, որ սրտին հաւա-  
տարիմ թարգմանն կարգուած է, ուրիշ բան

չըլլայ այլեւս, եթէ ոչ խաբուսիկ քողն, որ  
զայն կը ծածկէ և կ'այլակերպէ: Կենաց յա-  
րարերութեանց մէջ որչափ թանկագին է  
համարձակ և անկեղծ մարդն Աստոր հետ մարդս  
կրնայ իւր դատողութիւնները, իւր զգա-  
ցումները, իւր ընթացքը կարգադրել. իւր ըն-  
կերութիւնն ամենեւին երկդիմի և խաբեքայ  
չէ. իւր բերանն ճշմարտութեան խողովակն  
է, և երբեք ստութիւնն իւր շրթունքները  
պղծած չէ: Բայց հարկ է խոստովանիլ թէ,  
այդպիսի մարդ մը կարի հաղուագիւտ է:  
Ճշմարտութիւնն պարզ և անկեղծ է, իսկ  
մենք կ'ուզենք որ տեքոտ և զարդարուն  
ըլլայ: Անիկա երկնքէն կու գայ, այսպէս ը-  
սեմ, բոլորովին կերտուած, և իւր ամէն կա-  
տարելութեան մէջ. բայց մենք մեր ձեռա-  
գործը, կեղծիքը, ստութիւնը կ'ուզենք,  
կամ, ինչպէս անուանի հեղինակ մը, որ իւր  
ամէն բանի մէջ գործած սխալներուն բազ-  
մութեամբն ամէն մարդիկներէ աւելի զայդ  
ապացուցած է, կ'ըսէ:

«Յերկնից գայ մեզ ճշմարտութիւն, և  
ստութիւնն ի յերկրէ»:

Ստութիւնը իբրեւ ամօթալի արատ մը  
նախատինք մը համարէ՝ խմաստութեան հետ:  
զի «Բարբ մարդոց սոց, կ'ըսէ, առանց  
պատուոյ. եւ ամօք նոցա ընդ ինքեանց ան-  
ընդհատ»: (Եկղիսիաւստիկոս Գլ. Ի. Հմբ. 28)  
Պարկեշտ մարդն, ճշմարիտ Բրիստոնեայն սը-  
տութիւնը արհամարհելով միայն չիշատանար,  
այլ և զայն կ'ատէ, և անկէ կը գարշի. քան-  
զի գիտէ թէ այն Աստուածն, զոր ինք կը  
պաշտէ, ճշմարտութիւնն ինքն է, և թէ սը-  
տախօս շրթունքներն անոր առջեւ պիղծ են:  
Սոյն այս գեղեցիկ զգացումներն ունէր Ափ-  
րիկէի Թակասթա քաղաքին Ֆիրմուս անու-  
նով սուրբ Եպիսկոպոսն, զորմէ կը խօսի  
սուրբն Օգոստինոս: Այդ սուրբ Եպիսկոպոսն  
իր տան մէջ մեծ խնամքով կը պահէր ան-  
մեզ մարդ մը, զոր հեթանոս Կայսր մը կ'ու-  
զէր մեռցնել տալ: Կայսեր հրամանաւ ոստի-  
կաններ եկան անկէ այդ մարդը ուզել, իրենց  
պատասխանեց թէ, ո'չ կրնար ստել, և ո'չ  
ալ յայտնել իրենց փնտռուած մարդուն ա-  
պաստանարանը: Անոր երեւակայելի ամէն

(\*) Տես թիւ 78 էջ 33:



տեսակ տանջանքներ կրել տուին . քայց ինքն զիւցազնաբար հաստատուն մնաց : Զինք Կայսեր առջեւ բերին , որ անոր ազնիւ զգացմանց վրայ հիացաւ , և նոյն իսկ իրեն քով պահած մարդուն կեանքն անոր շնորհեց : Որպիսի՞ գովեստից արժանի չէ այս անուանի Եպիսկոպոսն , կ'ըսէ սուրբ վարդապետն Օգոստինոս , որ ճշմարտութիւնը մինչեւ ամէն բան կրելու աստիճան սիրեց , քան թէ ստել : Այդ սուրբ Եպիսկոպոսին պէս դուն ալ աւելի ճշմարտութիւնը յարգէ՛ , քան աշխարհիս , ամէն բաները . կեղծ մարդու մը համարումով ապրելէն վախճի՛ր : Ստույթիւնը ատէ՛ , և , թէպէտև աշխարհիս վրայ զայն մեղաց մէջէն ամենէն անվնասը նկատեն , զանի պատուաւոր մարդու մը համար ամենէն ամօթալին և ամենէն անարժանը քարոզէ՛ ամէն տեղ : Երբեք նոյն իսկ քու պատմած բաներուդ մէջ , զանոնք աւելի հաճելի ընծայելու դիտմամբ , զանի չխառնես : Որչափ ալ զանի զարգարուն ընես , հաւատա՛ որ քու բերնիդ մէջ շատ անվայել է : Կրօնաւոր մը , որ սուրբ Թովմայի Ագուլնացոյ առերեւոյթս ունեցած պարզամտութիւնը ծաղրել կ'ուզէր , անոր ըսաւ որ դէպի պատուհան հրթայ ուր պիտի տեսնէր որ եզ մը օդին մէջ կը թռչէր : Սուրբ Թովմաս դէպի պատուհան վազեց : Կրօնաւորն սկսաւ անոր վրայ ծիծաղիլ ըսելով . « Ի՞նչպէս կրցար հաւատալ որ եզ մը կարենայ թռչիլ . « Աւելի կրնամ հաւատալ , պատասխանեց անոր Սուրբն , որ եզ մը թռչի , քան թէ կրօնաւոր մը , ինչպէս որ դուն ես , կարենայ սուս մը գրուցել » :

(Շարունակելի)

## ԹՈՒՂՔ ՀՈՎՈՒԱԿԱՆ

(Շար.)

Գ. Ֆեսիս օլունմագլըգ . — Պսակ ֆէսիս օլունմագլ պիր խորհուրդ տըր , Կանի անճագ նիքիւս օլանլարտան պիրինին վէֆաթըլա Պսակըն րապըլթաւը չէօդիւլիւր . Մոլսիսա կան օրէնք ղէմանընտա , պազը սէ պէպլէրէ

մէպնի , ղէվճէսինի թաթլիգ էթմէյէ , իզտիվաճը ֆէսիս էյլէմէյէ միւսաատէ իտիլիրտի իսէ , պու՝ մահգա « օնլարըն սէրթ երւրէքլի օլտուզը իչուն » վազը օլուրտը : (Մատ . ԺԹ . 8) . Հալպու քի , « իպթիտայը խիլգաթտա պէօյլէ օլմամըչտը » (Մատթ . ԺԹ . 8) . Զիւնքի Խալիք օնլարը երքէք վէ տիչի խալգ էյլէմիչ վէ տէմիչ տիր . « Էրքէք քէնտի բէտէր վէ վալէտէսինի թէրք իտէրէք գարըսընըն արգասընտան կիթսին վէ իքիսի պիր թէն օլտունլար , չէօյլէ քի Ալլանըն պիրլէչտիլպիչ օլտուզունը ինսան այըրմասըն » (Մատթ . ԺԹ . 6) . Իչթէ պու սէպէպէ պինաէն տիր քի , Յիսուս Քրիստոս իզտիվաճը քէնտի իպթիոսի վէ միւսթիպիլ ֆէսիս օլունմագլըզնա իատէ էյլէմիչ տիր :

Շու հալտէ , ֆէսիսի նիքիւս (ամուսնաւուծում) Ս . Աւետարանըն գանունլարը միւսճիպինճէ մահքիւմ իտիլմիչ պիր մատտէ տիր , մա մաֆիյ , պազը էսպապա մէսինի մուվագաթ պիր այրըլըա միւսաատէ օլունապիլիւր . Ֆագաթ պու թագտիրտէ տէ հէր իքիսի պէր հայաթ օլտուգճա , ղէվճէյնաէն պիրի տիկէր պիր նիքիւս ագտ իտէմէյ . Պօղոս Առաքեալ պու հօլտա էմր իտիյօր . « պազը գօճասընտան այըրմասըն վէ շայէտ այրըլաճագ օլուրտա , Կա գօճասըլ պալսըն վէ հախօտ թէքրար դօճասըլա պարըչսըն . էրքէք տէ քէնտի գարըսընը պրագմասըն » (Ա . Կորն . Է . 11) :

Իչթէ պու պալաուէ սէրտ օլունան սէպէպլէրէ մէպնի , հէր հանկի պիր , միլլի օլտուն , ճիւմանի օլտուն , գանունա իսթինատէն , Պսակըն մահիլէթի վէ ֆէսիս օլունմամագլըզը հագգընտա Գաթօլիք Բիլիսասընըն տէյչիլմէյ գանունլարը խիլաֆընտա վէրիլէն գարարլար հիւքմիւլգ տիր : Զիւնքի , Պսակ պիր խորհուրդ օլտուզը հասէպիլլէ , մութլագա սահիհ քիլիսանըն գանունլարընա թապի օլմասը իճապ իտէր : Պինաէն ալէյհ Պսակ Խորհուրդընա միւթէալլիգ պիլ ճիւմէ խուսուսաթտա , պիր քրիսթիանըն վաղիֆէսի ազիլ Գաթօլիք քիլիսասը գանունլարընա իթաաթ էթմէք տիր :

Բ . Մէսուս վէ պաթիթիյար պիր իզտի-



ված ազատ իթմէք իշխուն իզթիզա իտէն վա-  
սիթալար :

Շու պետպախթ արարմըզտա , խթթիզաճ-  
պըզ վէ սաստէթտէն մահրում զէվճ ու գէվ-  
ճէլէրէ բէք չօգ թէսատիւֆ խախմէքտէ տիր :  
Աճէպա պունըն սէպէպի նէ՞ տիր . զէվճ ու  
զէվճէլէր արասընտա միւշահատէ օլունան  
պու գատար իթթիֆագըզըզլարըն սէպէպի  
նէ՞ տիր . — Իշթէ սէպէպի . չիւնքի պու իզ-  
տիվաճլար , Ս . Պսակըն պիր խորհուրդ օլ-  
տուզընը տիւշիւնմէքսիզին , պէլքի տէ ,  
պիւսպիւթիւն տիւնեէվի մագսատլար թաա-  
գիպ իտէրէք ազտ օլունմուշտըրլար , Սէօ-  
զիւմիւզիւ սիզէ խիթապ իտէրիզ , էյ սէվ-  
կիլի բունանի էվլատլարմըզ , կէնճէր , կէնճ  
զըզլար . Պսակ խորհուրդընըն սաստէթիյլէ  
պսիթիւար օլմայը արզու իտէ՞րմիսինիզ :  
Իշթէ ազիզ քիլիսա թարաֆընտան չու նա-  
սիհաթլարը խայրընըզ իշխուն սիզէ թէվճիհ  
իթմէքտէն չէքինմէյիզ :

1. Քէնտինիզի պիր քէրրէ թէֆթիշ ի-  
տինիզ քի աճէպա իզտիվաճ մէսլէքի իշխուն  
Ալլահտան տալէթիթիթիտինիզ : 2. Ալմազ իս-  
թէտիյնիզ քիմէյի էյիճէ ինթիխապ էյլէ-  
յինիզ : 3. Ս . Պսակ Խորհուրդընը լայըզ  
վէճիլէ գապուլ իթմէք իշխուն էյի հազըրլա-  
նընըզ :

1. Իզտիվաճ մէսլէքի իշխուն Ալլահտան  
տալէթ :

Ճէնապը Ալլահըն տալէթի օլմատըգճա ,  
հիշ պիր մէսլէքտէ միւլէֆիագ օլմապ գապլ  
տէյիլ տիր : Պագաթ իզտիվաճ մէսլէքինէ  
տալէթլի օլուպ օլմատըզընը նա՞սըլ թանը-  
մալը տըր . էվլէլ էմրտէ Ալլահա միւրա-  
ճաաթ էյլէմէլի , չիւնքի հիշ պիր մուհիմ  
խուսուսը տուաըզ պաշլամագ ճայիզ տէյիլ  
տիր : Աճէպա , Քիթապը շէրիֆին գալլինճէ ,  
ինսանա էյի գէվճ վէ եա գէվճէ վէրէն պիզ-  
զաթ Ալլահ տէյիլ մի տիր : «Էվ վէ էմլաքը ,  
էվլատլարա բէտէրլէր թագսի» իտէրլէր ,  
հալպուքի ինսանըն գէվճէսի Ալլահ թարա-  
ֆընտան թէնսիպ օլունուր » : (Առակ . ԺԹ .  
14) : Տուատան սօնրա , էպէվէյն իլէ խթի-  
շտ էթմէլի . չիւնքի ծուար թէճրիպէլէրի  
սէպէպիյլէ , պու խուսուսաթա վագըֆ տըր-

լար վէ հէր քէստէն զիյատէ ծուար քէնտի  
էվլատլարընըն ֆիքրլէրինի թէնսլիք խոէ-  
պիլիլլէր : Մամաֆիյն , շայէտ բէտէր վէ վա-  
լիտէ մութլապա քէնտի մէնֆատթլարը , իզ-  
պալլէրէսթիքլէրի , թամալարը վէ սայիր  
կէճոա վահի սէպէպլէր թագսիպ իտէճէք օ-  
լուրլարսա , հատտը պէլլուզա իտիլմիշ օլան  
պիր քիմսէ իշխուն , ծուարըն ֆէքրինէ թապի  
օլմամագ ճայիզ օլապիլլէր . Պագաթ եինէ պու  
թագսիքտէ աաիսի , ահա պապայա պօրճու  
օլտուզը հիւրմէթ վէ բիայէթտէ գուսուրը  
պուլունմա հալը տըր : Նիհայէթ , բուշէնզա-  
միր վէ ազիզ պիր խոստովանահայրըն ֆիք-  
րինէ տէ միւրաճաաթ օլունապիլլէր : Օ . պու  
խուսուստա հէր տիւրլիւ մէնֆատթ ֆիք-  
րինտէն արի օլարապ , իճապ իտէն թարիզի  
իրայէ էտէպիլլէր : «Հէր քէսին ֆիքրինտէն  
խթիֆատէյէ չալը , վէ հարարըզլարը օլան-  
լարըն ֆիքրինի խօրլամա» (Տալլա . Դ . 19) :

2. Թէէհիւլ իտիլէճէք շախսըն ինթի-  
խապը :

Պիր քիմսէնին իզտիվաճ մէսլէքինէ տա-  
վէթլի օլտուզը անլաշընըզտան սօնրա , պա-  
սիթէթ գանունլարընա բիայէթ իտէրէք ,  
թէէհիւլ իտիլէճէք շախսը ինթիխապ էյլէ-  
մէլի : Մատամ քի իզտիվաճլա հուսուլա  
կէլէն պիրիք մուվագպաթ սէյիլ տիր , էօ-  
լիւպ կիտէնէ գատար տէվամ էտէճէք տիր ,  
վէ պիր քէրրէ թէզէվվիւճ իթտիքտէն սօնրա  
արթըզ ալըլմանըն վէ պիր պաշգաաըլլա  
թէէհիւլ իթմէնին ինքեանը եօզ սըր . իշթէ  
պու սէպէպլէրէ մէսլի Քիլիսայը շէրիֆ քէն-  
տի էվլատլարընըն խայրը իշխուն ծուարա պու  
մուհիմ խուսուս հագընտա պազը պատի-  
րէթ գանունլարը իրայէ էթմէյի վէ ծուարը  
իզազ էյլէմէյի վագիֆէտէն ատտ իտէր : Սէվ-  
կիլի էվլատլար , Քիլիսանըն իքի պին սէնէ-  
լէք թէճրիպէսի նէթիճէսի օլարապ սիզին  
խայրընըզ իշխուն , սաստէթինիզ իշխուն վէր-  
տիլի նասիհաթլարը . սիզէ էօյրէթտիքլէրինի  
տիյնէյինիզ :

(Մապաշի վար)



## ՎԵՍՈՒՎ ԼԵՐԱՆ ԽԱՌՆԱՐԱՆԸ

Վեսուվ հրաբուխ լերան վերելքը այսօր միեւնոյն զփռարութիւնները չիներկայացնէր, ինչպէս էր Ստրաբոնի, Պլինիոսի, Տակիտոսի և Դիոն Կասիոսի օրով: Պարզապէս երկաթուղով կ'ելլուի, նախ հասարակով, ապա ճանկաւորով մինչեւ 600 մետր բարձրութիւն. մնացածը չուանեայ ճամբով (funiculaire): Հակառակ այս դիւրութիւններու՝ դեռ բաւական վտանգներ կան այն վերելքին. երբեմն ճամբաները կամ կայարանները կը սուզին՝ փխուր հողոյ պատճառաւ. երբեմն անակնկալ պոռթկումներ սեղի կ'ունենան ահաւոր հրաբուխին զփռատեսիլ խառնարանին (cratère) մէջէն, մուխ, բոց, հալած քարեր, լաւա:

Քրիստոսի թուականէն առաջ Վեսուվ լեռը կը նկատուէր իբրեւ մարած հրաբուխ մը. բայց ներքին ժամանակ դարձեալ բորբոքեցան 67 թուականին: Հազար ինը հարիւր տարի առաջ Վեսուվը նկարագրած է Ստրաբոն. և զարմանալի բան է որ 1906ի աղէտէն ի վեր լեռը ճիշդ Ստրաբոնի ժամանակուան ձեւն առած է: Իր ստորոտը ծածկուած է հիւսնալի գիւղաքաղաքներով և գեղատեսիլ այգեստաններով: Վեց հարիւր մետրէ անոյին ծածկուած է լաւայով և խճաքարերով: Գազաթը, մանգաղաձեւ, կը պարուհակէ խառնարանը, հազար հարիւր մէթր բարձրութեամբ. Ստրաբոնի նկարագրութեան նայելով, մարած խառնարանի արամագիծը կը չափէր շուրջ չորս քիլոմէթր: 64ի երկրաշարժին կեդրոնական խառնարանը կիսով չափ փլաւ և 1300 մէթրի բարձրութեան մը ելաւ: Յետոյ վրայ հասաւ 24 Օգոստ. 79 տարուան ահաւոր աղէտը, որ կործանեց զՊոմպէի քաղաք զոր հիմա հողէն զուրս հանեցին գիտունները ինչպէս որ էր այն ժամանակ. անդուգական և միակ նմոյշ. Հռովմէական հին քաղաքի մը, իւր խկութեան մէջ. այն օր նաև Պլինիոս մեծն՝ որ հրամանատար էր Հռովմէական տորմիլի Պայայի

ծովածոցին մէջ, Միսէն հրուանդանին մօտ, տեղացող մոխրոյ և մինչեւ ի ծով վազող լաւայի այրող շոգիներու տակ խղդուեցաւ, ոչ չատ հեռու ի Ստապիայէ (այժմու Գասթելլամարէ):

Ներոնէն մինչև Կարոլոս Ե. (Charles Quint) պատմութիւնը կ'արձանագրէ ինը անգամ մեծ բորբոքումներ հրաբուխին: Երկուքը, Սեպտիմիոս Սեւերոսի և Մեծին Կոստանդինոսի օրով, զարհուրելի եղած են: Չորեք տասններորդ դարէ առդին նոր ուժգնութեամբ մը վերսկսան պոռթկումները: Անկէ ի վեր յիսուումէկ բորբոքումներ կը համրուին, որոնց մէջ 30 Ապրիլ 1872ին և մահաւանդ 8-15 Ապրիլ 1906ինը ահաւոր բաներ էին: Այս վերջինը նմանցողին այն աղէտին որ կործանեց զՊոմպէի: 1906ի Ապրիլի օրերուն մէջ լեռան ձեւը փոխուեցաւ, և գազաթը կործանեցաւ նոր բացուած սարսափելի խառնարանի մը անդունդին մէջ, որոյ շրջանակը կը չափէր 2500 մէթր:

Սակայն մինչև հիմա ոչ ոք մահկանացուներէն ժպրհած էր Վեսուվի խառնարանին անդունդին յատակը դնել իր ոտքերը, այն ահաւոր փոսին մէջ, ուրկէ կը ցայտէր զփռային հուր, վիթխարի ժայռեր, ծծումբ, մոխիր, մուխ թղփայորդ. և կը ժայթքէին հրահոսան լաւայի հեղեղներ, քաղաքներ ծածկելով, ինչպէս Բոմպէի, և շրջակայքը բոլոր աւեր և ահուսարսափ տարածելով: Ով որ յանդգնած էր քիչ մը առաջ թափանցելու, անխնայ զոհուած էր, մահաւանդ աներկիւղ կամ անխորհուրդ Անգլիացիներէ շատերը: Այս փառքը վերապահուած է եղեր անվեհեր բրօքէսօ, որ Մալլատայի, որ Վեսուվի արքայական գիտարանին օժանդակն է: 1906ի ժայթքումէն ի վեր անհուն խորխորատը ամէն կողմանէ ձեւաւորուած է ուղղաձիգ սայրասուր պատերով ուսկից առատ առատ վեր կը բարձրանան ամպանման մուխ ու ջրային գոլորշի, բլրաջրատական և ծծմբային թթուներով խառնուած: Ահաւանակ անոնց պատճառաւ էր որ ոչ ոք ցարդ կրցած էր իջնել յատակը, ուսկից թանձրախիտ կը պոռթկան այդ կաղերը: Կար նաև



բարձրաբերձ սարերէն ահեղ ժայռերու կամ փխրածներու մահաբեր թաւալուով դէպ ի յատակը :

Բրօֆ. Մալլատա լաւ մը զննութենէ անցունելով բաժակին չըջանակը, իմացաւ որ հարաւ-արեւելակողմը ամենէն մատչելի էր : Եւ անցեալ Մայիս 17ին, հրաբխագէտ եւ շատ փորձառու Վարլաձձէն հետն առած. ժամը 9ին շարժեցաւ խառնարանին այն եղերակողմէն, որ Բոմբէիի վրան է : Տանդէաստեղծ տարտարոսին սարսափելի Պօլնիա-ներուն վայրէջքն էր կարծես, ուր՝ թեւաւոր մարդակերպ գազանն Կերլոն պէտք էր, իւր սարսաղեղեցիկ չըջաններովն, ցաւոյ քաղաքին մետած օդոյն մէջ... որոնց նկարագրութեամբ վեց դար առաջ Տանթէի ահաւոր հանձարը նախադգացած էր սաւառնակի օրէնքները :

Հրաբուխն ի վար ձգուեցաւ առաջին անգամ չուան մը շուրջ 140 միթր երկայնութեամբ, և այսպէս իջաւ Մալլատա այս երկայնութենէն ի վար, անցնելով հսկայական կարծես սանդուխէ մը սեպածեւ ցցուած ժայռերու, եւ թաւալվոր սրասահ զառիթափներէ :

Շուրջ 120 մեղր խորութեան մէջ հանդիպեցան լաւայի լայն եւ շատ հակեալ շրջանակի մը, որ կ'իջնէր դէպ ի յատակը հարիւր մէթրէ աւելի խորութեամբ : Անկէ վար դէպ ի հարաւ դառնալով, բեկորներու շեղջակոյտի մը հանդիպեցան, որուն վրայ հարիւր մեղր երկայնութեամբ նոր չուան մը հաստատելով, երկու աներկիւղ խուզարկողներն կրցան իջնել 1911 Մարտ 12ի ահաւոր կործանումին յառաջ բերած խոռչներէն որ կը տարածուին մինչեւ յատակը, ուր հասան ժամը 11ին :

Բրօֆ. Մալլատա յատակին մէջ մնաց 2 ժամու չափ, ամէն կողմ չըջելով եւ զննութիւններ ընելով, ծանրաչափի եւ ջերմաչափի : Այլ եւ այլ կէտերու հաստատուն ջերմութիւնն էր 90էն 98 աստիճան : Խառնարանին խորութիւնն է երեք հարիւր մեղր : Մեկնելէն առաջ Մէլլատա կանգնեց հոն կարմիր դրօշակ մը : Վեր մագլցելու համար եր-

կու երկրախոյզներն ճշմարիտ լարախաղացի ճարտիկ հիմնալի մարզանքներ կատարելով, հետեւեցան չուաններուն դժած ճամբուն : Ամենէն մեծ դժուարութիւնք կը պատճառէին այլ եւ այլ կաղերու վերածիւթենէն, որոնք կը խղղէին շնչառութիւնը եւ կը զայրացնէին թոքային գործարանները :

Ամէն վայրկեան վերելեակներուն շուրջը կը թաւալէին կը կործանէին ահագին բեկորներ, որոնք սարէ ի սար զլորելով ահագին բոմբիւններով կ'իջնէին յատակը, օդը լեցընելով մանրամաղ փոշիով : Ահաւոր վտանգ մըն է այս : Բրօֆ. Մէլլատա այս բեկորներուն ինկած ատեն անոնց վայրկենական լուսանկարներ հանեց : Ինչպէս նաեւ լոսանկարեց խառնարանին յատակն ու որմերը եւ հանքերու թանկագին ժողովածոյ մըն ալ հետը բերաւ :

## ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՒՆԷՐ

### Տ Օ Ն Ա Յ Ո Յ Յ

|             |                                                 |
|-------------|-------------------------------------------------|
| Փետրուար 23 | † Կիր. գծ. Դ. Բառասն. Տեստիմ                    |
| 24          | Բշ. զկ. իւր. or Մեծ Պահոց                       |
| 25          | Դշ. դձ. իգ. »                                   |
| 26          | Դշ. դկ. իղ. »                                   |
| 27          | Եշ. ամ. իւր. »                                  |
| 28          | Ուրբ. ակ. իգ. »                                 |
| Մարտ 1      | Շք. քձ. իւր. » — Եւ Բառասն<br>Մանկանցն Սերասիոյ |

Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ :— Միայնակեցութեան կեանքի մէջ փայլելով ամէն տեսակ առաքինութեամբ, Յովհաննէս՝ կոռուեցաւ Ս. Կիւրեղէն քահանայական աստիճանի, և գործակից եղաւ իրեն՝ սրբազան պաշտաման մէջ, Յովհ. զօրաւոր էր բռնիւք, քաջ ատենախօս, հատու առաւածարան, մեծանձն եւ համբերող, ահարկու յանցաւորաց դէմ, և հայրազորով՝ զղջացելոց հանդէպ : Շատ բան կրեց հերետիկաներէն և Ս. Կիւրղի հակառակորդներէն՝ մանաւանդ անոր աքսորանոց ժամանակ : Եւ երբ Ս. Հայրապետն հանգեաւ ի Տէր, ամենուն աչքը ինքնորեքաբար դարձաւ Ս. Յովհաննէս վրայ, զոր յաջորդ կարգեցին Ս. Կիւրղի Երուսաղեմոյ Պատրիարքական Աթոռոյն վրայ, յամին



388 կամ 390: Արժանատւանգ յաջորդ մը եղաւ երանելին՝ աշխարհ մեծահոգի Հայրապետի մը: Հաստատուն հաւատք, ողջամիտ վարդապետութիւն, անբասիր կեանք, անխղճողդ եռանդ և հայրանամ սէր փայլեցունին զինքն այն գերազանձ Աթոռոյն վրայ իբրեւ ջահ լուսատու արեւելից և արեւմտից: Երանելին Անտառն, Համայն Ս. Քահանայապետը, ի 400ին առ Յովհաննէս գրած մէկ նամակին մէջ պրպէս կ'ըսէ անոր. Արարել, ո՛վ այր՝ գերազանց ամենուն, այնչափ պայծառ կը շողան լաուրթիւններով, որ բաւականչափ խօսք չեմ կրնար գտնել որ եւ արդիւններուդ հաւասարի:... Լաօն զի եւ Եպիսկոպոսական կարգդ յոյր աշխարհիս վրայ լոյս արձակելով, մինչեւ առ մեզ հասցունց իր գեղեցիկ հառազայրները: Անհաւատարեկի գովասանք:— Այն ժամանակները սակայն մեծամեծ Ս. Հարց կարծես համբիժացու-թիւնն էր. որմէք առհասարակ Ս. Յովհաննէս հետ բարեկամ և սրտակից էին: Սակայն չարանեղ թըշ-նամին այս սրբակեաց անձանց մէջ ալ երբեմն գրգռութեան որմն կըցուցանէր առժամանակ զի, ի պատճառս շափազանց եռանդի կամ անհասկացողութեան: Գլխաւոր առիթն էր սրագինեան մոլորութեանց պայքարը. ոմանք գործդինէս կը պատկա-նէին՝ սխալները վերագրելով անոր աշակերտաց. ուրիներ կը գտնուէին զինքն ալ. Ս. Յովհաննէս առաջիններէն էր. որ վրան Ս. Եպիփան և Ս. Հերո-նիմոս գծաւանդ իր հետք, մանաւանդ որ Ս. Եպիփ. առանց հրամանի Երուսաղէմայ վիճակին մէջ ձեռ-նադրութիւն կատարած էր: Բաւական կծու թրջ-թաղցութիւններ եղան. վերջապէս Աղեքսանդրից Պատրիարք Թէոփիլոսի միջամտութեամբ խաղաղու-թիւն եղաւ: Սակայն միւս ալլ գծաւանդ ինչպէս, միեւնոյն պատճառաւ, այս Թէոփիլոսի և Ս. Յովհ. Ոսկերեան Հայրապետի միջեւ, որ անոր հայածած Իսիդորոսը իւր ընկերաց հետ սիրով ընդունէր էր (400) և Ս. Եպիփան Թէոփիլոսի կողմակից էր, իսկ Ս. Յովհ. Երուսաղէմայ Հայրապետը՝ Ս. Յովհ. Ոսկերե-անի անաշայլ բարեկամն մնաց, որ իր աքսորաւայ-րէն կը գրէր անոր. «Տարագիր եղանք ի Կոնստն, բայց չարաաքաւեցանք Ձեր օրուն. զի այն՝ ուրիշէն կախում ունէր, այլ այս մեր՝ ձեռքն է բոլորովին: Նոյն տարին մեր Սուրբ Երեմիայ գանուեցաւ Սրբուհ-ւոյն Պաւլոյի Համայնեցւոյ թողման, որ Երուսա-ղէմի մէջ փոխանեցաւ. փոխադրեց նաև Ս. Ստեփա-նոսի մարմինը ի Ս. Արն, և Երանելի Խնովկեանիս Ա. Քահանայապետէն յանձնարարական նամակ ըն-դունեցաւ պանդուխտներու համար: Նոյնպէս Մեծն Օգոստինոս արտաքց կարգի մտերմութիւն ունէր Ս. Յովհաննէս հետ և ի գովասանք նամակներ կ'ուղ-ղէր անոր. և երբ Պեղագիտոս հերետիկոսապետը շը-նորհաց ուրացողը, արեւելիքի մէջ ալ իր թոյնը սքի-ռելու մտքը եկաւ Պաղեստին և կեղծաւորեցաւ սը-տապասիր գուշերով, Հիպոստոյի սուրբ Եպիսկոպոսն Օգոստինոս, անոր գէմ իր շարադրած գրքերը զրկեց

Յովհաննէս, որպէսզի քաջ ծանօթանայ և շոգնոգ խա-բերայէն չպատրի: Ս. Յովհաննէս Հայրապետ յանդի-մանեց աղանդապետը և անոր չարիքէն զերծ պահեց իր հօտը: Եւ հասնելով ի խոր ծերութիւն, հանգեաւ ի Տէր ի արդեամբք, ի 417, Յունուար 21: Հազիւ թէ վախճանեցաւ, Չողիմոս Քահանայապետ կը գովէ զինքը իբրեւ սուրբ, ինչպէս ժամանակին բոլոր սուրբ Հայրապետներէն ու պատմիչներէն նոյնպէս փառա-բանուեցաւ:

### ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻՒ՝ ԳՐԷՆ

Գիրք Ա.—Գլ. Գ.—ՃԵՄԱՐՏՈՒՄԻ ՎԱՐՊԱԿԵ-  
ՏՈՒՄԻՆԵՐ ՎՐԱՅ: (Շար.)

Շատեր արեւի փոյր կը ցանին բուն գիտնալու քան թէ բարի վարք ունենալու, անոր համար ալ սեպ կը մոլորին, եւ գրեթէ ոչինչ կաւ շատ ինչ պնդող կը քե-րեն:

Ո՛հ, երբ ա՛յնչափ գուն գործէին մոլորիւնները արմատսի իսկոյն եւ առաքիւնաբանները անկոյն՝ ո՛ր-չափ կը ցանան իսկոյններ յուզելու, անշուշտ այնքան մեծ չարիք ու զայրախոյռիւն չէին ըլլար ժողովրդեան մեջ, եւ ոչ այնքան քուլաքիւն վանկերու մեջ:

Ապաքին դասասանի օրն երբ հասնի՝ պիտի չի հարցուն մեզիք թէ ի՞նչ կարդացիք, այլ թէ ի՞նչ գոր-ծեցիք, եւ ո՛չ թէ ո՛րքան ճարտարաբանք խօսեցանք, ալ թէ ո՛րպիսի բարեպաշտաբանք ստիպեցիք:

Ըսէ՛ ինձի. ո՛ր եւ հիմա այն ամէն Տեսիլ եւ Վարդապետք, զորոնք շաւ անցար երբ կ'արեւելն եւ ուսմանց մեջ կը ծաղկէին:

Անոնց հասցրեցեր կիսաւ ուրիշներ կը վայելն. եւ չցիտեմ թէ ա՛րեւոք անոնց վրայ քնաւ կը խորհիմ: Իրենց կենդանութեանը քան մը կը կարծուէին, հիմա յուրիւն կը սիրէ անոնց վրայ:

### ԱԶԻԶԼԻՅԻՆ ՔԻՒԶԻԻԲ ՊԻՐ ԶԻԶԷՅԻ (\*)

(Տեղամ)

Ալլահա օղան թէսլիմիյէթի վէ Էմիլիյէթի բէք պէօյիւք իտի: Հէր նէ պատար տա չո-ճուգ իտի իտէ տէ, պաղը թալլը ու՛հարա-քէթլէրի, պաղը սէօզլէրի վարորդ քի հիլ պու տիւնեատան տէյիլտի. ծնտաքի գար-տաշ մուհապէթի վէ ճանլարըն սէլամէթինէ օղան արզու քէնալ սիննիւնէն բէք երե-սէք իտի. պուհա տաիր բէք չօգ միսալլար



տա վէրմիշ տիր: Մնուն Ալլահա օլան աչգը վէ իմանը կիւնտէն կիւնէ արթար վէ Հա- զորդութիւն ալմաղա օլան արզուսը աստէթա թաշարտը: վէ ուֆագ գուսուրլարը իւզէ- րինէ տէօքտիւլիւ սըճագ կէօզ եաշլարը ին- սանը աստէթա շաշըրրտը:

Ճէնապը Հագգ ծնը թապիպթըն ֆէվզըն- տա օլան մէվհիպէրիյլէ տէ թէլթիֆ էյլէ- միշ տիր: Մնըն նուրը եիւքսէքտէն իտի: Յիսուսըն Ս. Հազորդութիւնտա մէվճուտ օլ- մասը հագգընտաքի հիսսիյաթընա Ալլահ իլէ սամիմի վէ տաիմի իւնսիյէթինէ պապըլա- ճագ օլուրսա, Նէլլի տաիի էն զիյատէ լութ- ֆա մագհար օլմուշ օլան բուհլար սըրաւըն- տա պուլունուր: Էքսէրլա եա մուգատտէս Ալլահա սէօյլէյէճէյինի վէ եախօտ զաթէն սէօյլէմիշ օլտուղընը իգարար էտէրտի: Փա- գաթ պու սէմավի միւքեալէմէլէրինէ տաիւր քէնտիսինէ պիր շէյ սօրուլտըղընտա, ծնուն ճէվապը շու օլուրտը քի: «Մուգատտէս Ալ- լահ պու խուսուստա քիմսէյէ պիր շէյ սէօյ- լէմէմէքլիյիմի թէնպիսի էթմիշ տիր»: Էվվէ- լինտէն խապէր վէրէրէք պիլախէրէ իճրասը կէօրիւլէն իսթիիւրաճաթը տա վար տըր: Էօ- լիւմիւնիւ էվվէլինտէն քէնք էտէրէք ծնուն կիւնիւնիւ պիլէ խապէր վէրմիշ տիր:

Թայիին իթտիյի կիւն, 1908 սէնէսի փե- տըրուարըն իքինճի կիւնիւնէ միւսատըֆ օ- լան վէ վալիտէթուլլահըն շէրէֆինէ սու- նուլմուշ օլմագտան մատա, ծնուն, էվլատը Յիսուս Մանուկը Տաճարա կէթիւրիպ թագ- տիւմ էյլէտիյի ճուճաա իրթէսի կիւնիւ իտի: «Պէն օ կիւն Մուգատտէս Ալլահա տօղրու ու- չաճաղըմ» տէմիշտի քէնտիսի: Յիւհագիգա տա, օ, պիր վէճտի սէմավի իչինտէ, կէօզ- լէրի եօգարտա, գօլլարը, քէնտիսինի չէքէն պիրինէ, եախօտ պիր շէյ տօղրու կէրիլ- միշ օլարագ, մէսէրրէթ վէ մուհապէթ կէօզ եաշլարը արասընտա սօն պիր ճէհտ իլէ խա- լիպինէ տօղրու ուշտու: Վէֆաթընտա, տէօրթ եաշ, պէշ այ վէ սէքիզ կիւնլիւք պուլունուլտըր:

Մնուն քիւչիւք ճէսէտի, սատէ պիր մէ- րասիւմ իլէ խաքը բաքա թէվտի օլընտը իսէ տէ, արասը չօզ կէշմէզտէն, անըն սուրըլը-

ղընըն բայիհասը մագպէրինտէն տիշարըյա տա իսթիշար էթմէյէ պաշլատը: Նէլլինին, վագ- թընտան էվվէլ զահիր օլսն թէաճճիւպէ շա- յան ֆագիլէթլէրի, ֆէվզ էլ ասէէ օմրիւ, ֆէ- րիշթէյէ մախսուս էօլիւմիւ, ծնուն վասը- թասըյլա իսթիհասալ օլունան լութֆլար ազ ազ հէր թարաֆտա շիւհու պուլմաղա պաշ- լատըլար: Պիր սէնէ սօնրա ծնը պաշգա պիր եէրէ տէֆն էթմէք իչիւն մէզարը աշըլաը- ղընտա, ծնուն ճէսէտի, էլպիսէսի, enfant de Marie միտալեասը ճիւմէթէն տէֆն օլուն- տըղը կիւնքի կիպի պօզուգլըգտան մուարրա պուլընտըլար:

Նէնի մէզարը, եէնի եէնի լութֆլարա մագհար օլմագ իւզրէ, պիր զիյարէթկեան հալինի ալտը: օրատա միւճիգաթլար կէօ- րիւլտիւլէր: Պունուն իւզէրինէ, իտարէի բուհանիյէ թահգիգաթա պաշլատը: տէօրթ եաշընտաքի պու ազիգէնին սուրըլար սըրա- սընա կէշիւրիլմէսի իչիւն Բօմայա տա միւրա- ճաաթտա պուլունըլտը: Բարա հազրէթլէրի միւնասիպ ատտ իթտիյի պիր սըրատա սօն գարալը վէրէճէք տիր:

Ահ, քիւչիւք Նէլլինին էօմրիւ նէ գա- տար շայանը հայրէթ տիր: ծնըն իւզէրինտէ կէօրիւլէն ֆագիլէթլէր վէ հիւսնի հալլէրնէ գատար շայանը իսթիսալ տըրլար: ծնուն մագհար օլտուղը պէօյիւք լութֆլարնէ գա- տար ճէլիլ տիրլէր: Յէվզ էթ թապիպթ շու ահվալ գարշըսընտա ինսանըն ֆիքրի իսթի- յարը սիւքուլ էյլէմէքտէն պաշգա պիր շէյ եաքամագ: եալընըզ իման վէ իթիգատա միւրաճաաթ էտէրէք տիր քի պիր մանա վէ- րէպիլիր: Հալ պու քի Դրիսաիանըն իմանը տա պունտան պէօյիւք պիր տէրսի իպրէթ ալըր վէ Մուգատտէս Ալլահըն գուտրէթ վէ ազամէթինի մէսն ու սէնայա մէճուպ գա- լըր:

Խ Ի Թ Ա Մ



# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԵՌԻԹԻՒՆԸ

Վաթսուհի հազար Հայ-Կաթողիկէ ժողովրդեան ղեկին ձեռք առած բարեյաջող քայլով յառաջ կ'ընթանայ թէ կրօնական և թէ ազգային տեսակէտով առաջնորդ մը՝ որ չէ Կաթողիկոս և Պատրիարք, որ չէ Արքեպիսկոպոս եւ Եպիսկոպոս. այլ պարզ ծայրագոյն Վարդապետ մը Գերապայծառ Տիտղոսով Մեծարեալ և Եպիսկոպոսական իրաւասութեամբ օժտեալ, այդքան բազմաթիւ ժողովուրդը 80ի չափ քահանաներով ի միասին, միայն ընդ միայն կը կառավարէ և կ'առաջնորդէ իմաստուն խոհմութեամբ ի նաւահանգիստն բարութեան և անվախճան երանութեան:

Ստուգիւ, Գերապայծառ Տէր Աբրահամեանն՝ բազմապիսի բարեմասնութեամբ օժտուած է և ունի մեծ ձիրքեր ներկայ դարուս համապատասխան կերպով առաջնորդելու իրեն յանձնուած բանաւոր հօտը՝ զէպի ճշմարտութիւն. սակայն միւս կողմէն ալ պէտք է խոստովանիլ որ այն իրեն յանձնուած բանաւոր հօտը՝ կրօնական սուրբ հոգւով տոգորուած է և իւր կրօնի սրբութիւնը միշտ անաղարտ պահելու ջանացած է. և այդ հոգին է որ զիրենք իրենց կրօնական Պետին հոգին է որ զիրենք իրենց կրօնական Պետին համեմատեալ կը գործեն ի պայծառութիւն սուրբ կրօնիս և ի բարգաւաճումն ազգիս Հայոց, կառուցանելով միանգամայն Եկեղեցիներ, դպրոցներ և այլ բարեգործական հիմնարկութիւններ: Թո՛ղ Բարձրեալն Աստուած օրհնէ այդ սուրբ միութիւնը:

Ահա վերնոյն բոլորովին հակապատկեր տեսարան մը մեր աչքի առջեւ բացուած կը տեսնենք Տաճկաստանի մէջ. թէպէտեւ Կաթողիկոս - Պատրիարք, Արքեպիսկոպոսներ, տասնեակ Եպիսկոպոսներ և բազմաթիւ վարդապետներ կը գտնուին իր մէջ, և որոնց իշխանութեան տակ հազիւ հազ ըստ իս ինչն ըստ հազար Հայ-Կաթողիկէներ կան. բայց գոթախտաբար այսօր իսպառ կրօնական տես-

սակէտով՝ անիշխանութիւնը տիրած է ըստ մեծի մասին այս հասարակութեան մէջ. ճշմարիտ կրօնական գիտութիւնը բոլորովին մէջքնէն վերցուած է, կեղծ և սեթեւեթեալ կերպով ազգութեան պաշտպան իրենք զիրենք քարոզած են, որով թէ ճշմարիտ կրօնքնին և թէ ազգութիւնին կործանելու և բնաջինջ ընելու պայմանին մէջ գրած են: Առանց խիղճ ընելու, բռն կերպով պայքարներ կը մղեն ամէն կողմանէ թէ կրօնքի և սուրբ Եկեղեցւոյ սկզբանց թէ հոգեւոր իշխանութեան և թէ մանաւանդ իրենց Հոգեւոր Պետին Գերեջանիկ Կաթողիկոս Պատրիարքին գէմ. ամէն տեսակ անօրէնութեանց, անլուր հայհոյութեանց, սեղանակապտութեանց, որբապղծութեանց ձեռնամուխ կ'ըլլան. Եկեղեցիները՝ աշխարհական թատերարեմի և աւագակաց բոյնի կը վերածեն. Գահանաներու և Եպիսկոպոսներու վրայ՝ սուրբ պաշտօն կատարելու ժամանակ, յանդուգն կերպով յարձակելու կը համարձակին. և որ աւելի խօշորական է, մինչեւ անգամ Եկեղեցւոյ մէջ պատերէն կախուած Ճանապարհի խաչի Պատկերներն վար կ'առնուն և ոտքի տակ առնելով կը փչրեն, և մէկքի կը ձգեն: Ո՛հ խեղճ մուրեալ ժողովուրդ, ո՛րքան թշուառ և ողբալի կուրութեան մատնուած էք դուք. ո՛ւր է ո՛ւր մնաց ձեր Ս. Նախնեաց հաւատքը, ձեր պապերուն, ձեր հաւերուն ճշմարիտ ազգասիրական ու կրօնական հոգին ու զգացումնքն: Ո՛հ արթնցէք արթնցէ՛ք չ'ըսեմ տգիտութեամբ՝ այս անտարբերութեան խոր թմբուկներէն: Դարձէ՛ք ի լոյս Աստուածգիտութեան, մանաւանդ դուք Պոլսոյ մէջ գտնուող մեծաշուք և աղնիւ Տեարք, անգրագարձէ՛ք և անաչառ աչքով զիտեցէ՛ք թէ ո՛ւր կը տանի զձեզ այս ձեր բռնած ճամբան, աւա՛ղ եթէ շարունակելու ըլլաք, ծայրն՝ յաւիտեական անել անդունդն է: Դուք պիտի ըլլայիք Ռուսահայ-Կաթողիկէներուն բարի օրինակ. բայց այդ փառքէն զրկուած էք, գոնէ դուք առէ՛ք անոնցմէ օրինակ լարի, և հետեւեցէ՛ք անոնց ճշմարիտ կրօնասիրութեան և թողուցէ՛ք զհին մարդն, և զգեցէ՛ք զնորն՝ ի Դրիստոս Յիսուս:

ՌՈՒՍԻՈՅ ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԵ ՄԸ



## ԱՍՏՈՒԱԾ Ո՛Վ Ե

- «Ալ ի՞նչ գործ ունի Աստուած մեզի հետ,  
«Դար մ'է այս լուսոյ, մեծ դար զարգացման.  
«Թո՛ղ պաշտեն զայն լոկ կղեր, մայրապետ  
«Մենք դիտկենք մէջ թաղած ենք զայն:—  
Այս կերպ կը ճառէր մի պարոն հրապարակ,  
Այն անկողնաւոր, նրբան խոր ուսման,  
Եւ սրահին մէջ լեցուն կին եւ մարդ  
Մրցիկ կ'ընէին ապաւած, բաց բերան:  
Եւ նա յաղթական իրեւ Գոլոմպոս  
Կարծես նոր աշխարհ գրքած կամ նոր գիւտ,  
Իրեւ կիկերոն ճարտար բանաստ  
Շուտով կը պարզէր ամէն դրժար ճիւղ:  
— «Ալ ի՞նչ գործ ունի Աստուած մեզի հետ:»  
Երբ կ'ընէր նորէն Պարոն մեր բանգէս,  
Մեծ ժամացոյցի հրնչեց ժամն ուժգին:  
Մարդ մը այն ատեն, լոկ իրեւ կասակ.  
— «Իրաւունք ունիս, պարոն մրցացի,  
«Ես ալ կ'ընէիք թէ չկայ Աստուած,  
«Քայց երբ կը լսեմ ձայն ժամացոյցի  
«Հրնար չէ՞ արդեօք, կ'ըսեմ զարմացած,  
«Որ օր մ'ալ երկիրս նրբան ինքնաշու  
«Գործիքն այս փոքրիկ բերմամբ կոյր բախտին,  
«Առանց շինողի, առանց լարելու,  
«Գոյնաւոր յանկարծ եւ դառնայ ինքնին:»—  
Պարոն բազմախոս, այս համեստ հարցման  
Ցարդ ի գուր փնտռէ գտնել պատասխան:  
ԳՈՂԻՎՈՒՆԻ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Հ Ո Ռ Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Պիոս Ժ. Ս. Քահանայապետը մեծ ցաւով հա-  
մակուեցաւ մահուամբ իր սիրելի քրոջ Ռոզա Սարգսի  
որ Փետր. 12ին սրբութեամբ վախճանեցաւ 72 տա-  
րեկան: Հանգուցեալը իր Եղբորը օգնած է առտին  
գործոց մէջ 1858-1875ին երբ նա ժողովրդապետի  
պաշտօն կը վարէր Թովմազոյի եւ Սայցանայի մէջ: Ա-  
պա իր ծերացած ձրք քով մնաց մինչեւ 1894, շը-  
ռապիւրով անոր ամէն տեսակ որդիական խնամք. և  
անոր վախճանիցէն յետոյ վերադարձաւ իր Եղբորը  
քով, որ Վենետիկի Պատրիարք եւ Կարդինալ էր: Եւ  
երբ Եղբայրը՝ աստուածային նախախնամութեամբ  
բարձրացաւ Ս. Պետրոսի Աթոռը, Ռոզա իր միւս  
քոյրերուն հետ փոխադրեց իր ընտելութիւնը Հռոմ:  
Պրէնիան պալատին մէջ: Հանգուցեալը շատ առա-  
ջինի եւ օրինակելի վարք մը ունէր. յաճախ կը մեր-  
ձենար Ս. Խորհրդոց բարեսիրտ եր, հեղահամբոյր, և

եղբայրաւոր ու պարկե տ. այս առաքինութիւնները  
որդէն իր աստիճան մէջ ժառանգական են: Բարեպաշ-  
տութեամբ և կատարեալ համակամութեամբ հոգին  
աւանդեց իր Արարչին ձեռքը, ընդունելով կրօնքի ա-  
մէն նպատակները, ինչպէս նաեւ Ն. Ս., իր Եղբորը,  
Քահանայապետական օրհնութիւնը:

Ս. Քահանայապետը հանդիսաւոր ունկնդր-  
ութեան ընդունեցաւ Պ. Գալարթոն Սպանիոյ Գեա-  
պանը, անոր պաշտօնին պարա ու պատշաճ մեծա-  
բանքներով:

Պ. Գալարթոն իր Ս. Հօր ուղղած բանաստու-  
թեանը մէջ, պարզեց Թագաւորին և Թագաւորական  
ընտանեաց Ն. Սրբութեան նկատմամբ ունեցած որ-  
դիական յարգանքը և խորին երաստագիտութիւնը.  
ցոյց տուաւ նաեւ թէ Թագաւորը՝ Սպանիոյ բարեքն  
ու յառաջագիտութիւնը կը փնտռէ Ս. Աթոռին հետ  
համաձայնութեան և խաղաղութեան մէջ, փոխա-  
դարձ յարգանքով հոգեւոր և ժամանակաւոր գերիշ-  
խանութեանց: Ակնկալութիւն յայտնեց որ Ս. Աթո-  
ռը և Սպանիա, այս ոգւով, ի կախ մնացած խնդիր-  
ները պիտի կարենան լուծել պատշաճօրէն, և երկու  
իշխանութեանց միջեւ բարեկամական յարաբերու-  
թիւնները պիտի տեսնեն ընդ երկար:

Ս. Քահանայապետը Գեապանին պատասխանելով  
ցոյց տուաւ իր գոհունակութիւնը նկատմամբ այն  
որդիական զգացումներուն, զորս նա յայտնեց յա-  
նուն իր Վեհապետին. և մաղթեց, Սպանիոյ երջան-  
կութեան և յաջողութեան համար, որ Սպանիական  
ժողովուրդին և Հռոմի մէկտեղեցաւ միջեւ ե-  
ղած առանդական զօգրքը պահպանելին և ամրա-  
պնդուին. և յատկապէս ամէն խառն խնդիրներու  
մէջ երկու իշխանութիւնները միաբան մնան իրենց  
յարաբերութիւնները կանոնաւորող հիման վրայ:

Այս երկու բանաստուութիւնները մեծապէս շա-  
հադողութեան Հռոմի կրօնական և քաղաքական շը-  
ջանակները:

Աւստրիոյ Վեհ. կայսրը և կայսերական ըն-  
տանիքը Վիեննայի Արքեպիսկոպոսական կանոնակոսաց-  
ժողովին ուղղեցին իրենց ցաւակցութիւնները Նազկ  
Կարդինալին մահուան տութիւն:

Ռակոնէզի Գերագոյն Ժողով, առաքելական  
նախարար Պոկոսայի, Յաւնուար 2ին մեկնեւ իր տե-  
ղէն դէպի Եւրոպա: Արդէն ծանուցուեցաւ որ Մատ-  
րիտի առաքելական դեսպան պիտի անուանուի:

Սուրբ-Երկրի նոր Տեղապահ (Custode) Հայր  
Գալարթերա, Փ. Ս. Կ., մեծ հանդիսութեամբ Ե-  
րուսաղէմ մտաւ:

Կայսրաւոր հանդիպում պէս, ողջունեցաւ քա-  
ղաքական և կրօնական իշխանութեանց և Լատին  
մեծամեծներու կողմանէ:

Խուճա մը Թուրք հեծելազօրք Տեղապահին կառ-  
քին առջեւէն քաղեց մինչեւ Նաֆալի գոտը: Հոն  
կազմուեցաւ թափօր մը և ուղղուեցաւ դէպ Ս.



Փրկիչ (San-Salvatore) Տեղապահութեան տնօրէն-  
ւոր Եկեղեցին: Եկեղեցւոյ դրան առջեւ Գաղղիոյ  
Ընդհ. Հիւպատոսը իրեններովը ողջունեց Տեղապահը  
յանուն Գաղղիոյ, Ս. Տեղեաց պաշտպանին:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Հինգշաբթի օր, Փետր. 20ին, տեղի ունեցաւ Ա.  
ւագ Թեմի քահանայից միօրեայ կրթութիւնը Աթո-  
ւանիստ Եկեղեցւոյ մէջ:

\*. Վերլուծելն կը տեղեկագրուի թէ Վ. Յով-  
հաննէս փաշայի Վերլուծելու հասած օրը Տեղւոյն Վ.  
Պատրիարքական փոխտնօրէնը, Զմեռու Գերջ. Մե-  
ծաւորին և մատակարար վարդապետին և թագական-  
ներուն հետ դիմաւորեր է Ն. Վ. Տէրութիւնը, Ն.  
Վսեմութիւնը կրակի օրը իր Բ. Տիկնոջ հետ Եկե-  
ղեցի երթալով Պատարագ տեսնել վերջ՝ Առաջնոր-  
դարանը կ'իլլէ և նկատելով շէնքին վայելչութիւնը և  
միանգամայն հոն տիրող կարգն ու կանոնը կը գնա-  
հատէ ուրախ արտիւ՝ տեղւոյն Հայ-Կաթողիկէ հո-  
սարկութեան զգալի զարգացումը. և շնորհակալու-  
թեամբ կ'ընդունի հայերէն և ֆրանսերէն լեզուով  
• իրեն նուիրուած ձեռնքը և եղած մեծարանքները:

\*. Ամբողջացնելու համար Տրապիզոնէ ստաց-  
ուած տեղեկութիւնն Արհի. Նաղեան Եպսկ.ի հոն  
ըրած այցելութեան առթիւ, կը հրատարակենք հե-  
տեւեալ մանրամասնութիւններն:

Հաւատացելոց մեծամասնութիւնը ինչպէս Եպիսկո-  
պոսի երթին նոյնպէս մեկնումի առթիւ շատ պատ-  
ուով վերաբերուեր է կրկին ապահովելով թէ ներկայ  
գայթակղական կողմութեան վերջ մը պիտի արուի:  
Մարեան ազնիւ գերդաստանն առանձինն եղանակաւ  
պատուածքաւ գտնուած է:— Առսակալն ո՛չ միայն  
փոխադարձ այցելութեան եկած է կէս ժամէն աւելի  
տեսակցելով նորին Արհիպատուութեան հետ, այլ  
նաեւ մեկնելու օրն զրկած է իր կողմանէ իւր թարգ-  
մանն ողջերթ տարու, և մաղթելու յաջողագոյն վե-  
րադարձ մը: Ամէն Հիւպատոսներն փոխադարձ այ-  
ցելութեան գալով ամէնքն ալ ցաւ յայտնած են  
քանի մը խոսքաւոր ապագայներու ըրած են: Մանաւանդ Գաղ-  
ղիոյ պատուական Հիւպատոսն առանձինն ազնուու-

թեամբ վերաբերուեր է և մեկնելու օրն՝ նաւը գա-  
ցեր է ողջերթ մաղթելու նորին Արհիպատուութե-  
ան: Միթարեան Վարժարանի Տեսչութիւնն՝ նա-  
խանձանդիր Եպիսկոպոսական արժանապատուութե-  
ան, Եկեղեցւոյ իրաւանց, արտասովոր ազնուութե-  
ամբ վերաբերուեր է, իր աշակերտաց ալ ընել տա-  
լով յարգանաց ցոյցեր. առանձին օր մը գիշերօթիկ  
և ցօրեկօթիկ աշակերտներ աջահամբուրի ներկայա-  
ցուցեր է գեղեցիկ ճառով մը, և մեկնելու օրն գիշե-  
րօթիկ աշակերտներն ծովափն իջած ծափահարու-  
թեամբ ողջերթ մաղթեր են իրենց Եպիսկոպոսին:  
Վերափոխման Մայրապետք առանձինն իրենց վան-  
քին մէջ, և աշակերտուհեաց կողմանէ դպրոցին մէջ,  
կայելու հանդէսներ կատարեր են ի պատիւ իրենց  
հովուին Վեր. Գալուչին Հարք ևս Ֆրէրք ու Գաղ-  
ղիացի Մայրապետք իրենց յարգադիր վերաբերմամբ  
լրացուցեր են ամէն զատկաբազի կողմանէ ընծայ-  
ուած պատիւն առ կարգաւոր թեմական Տրապի-  
զոնի, որ անշուշտ լաւ ու հաճոյական ապաւորու-  
թեամբ մեկնած է իր Աթոռանիստ Քաղաքէն: Գի-  
տենք որ թեմին ուրիշ քաղաքաց մէջ ունեցած ստի-  
պողական գործերն հարկադրեր են զինքն մեկնելու,  
որոնց կարգադրութիւնն վերջ պիտի վերադառնայ ի  
Տրապիզոն: Տէրը յաջողութիւնն ապր:

Ն Ե Բ Բ Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր .

Յունաց նորնտիր Պատրիարքը Երեքշաբթի օր,  
Փետր. 18ին, Գոթագիւղէն մեծ շուքով գնաց Կայս.  
Պալատ, և Սուլթանին ընդունեցաւ Մէճիտէի պատ-  
ուանչանք. յետոյ եկաւ Բ. Գուռ հանդիսաւոր թա-  
փօրով և անկէ գնաց Ֆէնէր՝ իր շքախումբով:

\*. Կը հաւատաստուի թէ Համիտէի գրահաւորը,  
որ Եգիպտոսէն Մալթա հասած էր, Մալթայէն ճամ-  
բոյ ելած է գէպի Կարմիր ծով:

\*. Յետեւալ տուրքերու հարկերն երեսունը  
պիտի գանձուի Փետր. 19էն սկսեալ:

\*. 1309ի ծնածնեքը զէնքի սակ կոչուած են:  
\*. Քաղաքիս գիւտանալիսական շրջանակի մը  
հասած հեռագրին համեմատ Ռուսիոյ և Աւստրո-  
Հունգարիոյ միջեւ պատերազմ մը անհրաժեշտու-  
թիւն պիտի դառնայ և Երուսական պետութեանց մի-  
ջեւ օրինաւոր յարաբերութիւնները վերահաստատե-  
լու համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

|                                                                  |     |
|------------------------------------------------------------------|-----|
| Քաղաք Յիսուսի չարչարանաց վրայ                                    | 413 |
| Ս. Պողոս եւ Քրիստոս                                              | 447 |
| Խմաստութեան սկզբանց վրայ քարոյական եւ պատմական խորհրդածութիւններ | 119 |
| Թուրք Հովուական                                                  | 120 |
| Վեսուկ լեռան խառնարանը                                           | 122 |
| Եօթնեակ Քրիստոնէի                                                | 123 |
| Ազիզիյին Բիւշիւք պիր չիչէի                                       | 124 |
| Ռուսաստանի Հայ-Կաթողիկէութիւնը                                   | 126 |
| Աստուած ո՞վ է                                                    | 127 |
| Տեղեկագրական                                                     | 127 |

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ. Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԵՏԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանց Շաքաքերքի, Բերա, Պայրամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս



## ԽՆԴՐԱՆՔ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵՆԷ

Մեծարոյ հարֆ եւ եղբարֆ

Կը ծանուցանենք մեր սրտին շերմագին բաղձանքները:

Ամէն կողմ ցրուած յայտարարութեանց շնորհիւ տեղեկացած ըլլալու է յարգոյ հասարակութիւնը թէ Պոլսոյ մէջ վաճառատուն մ'ալ հիմնած ենք, որով պիտի զբաղինք արտածմամբ և ներածմամբ. և ունինք ներկայիս բաւական պատրաստ ապրանք, իւղ և չոր պտուղ:

Ամենամեծ նպատակնիս է գոհացում տալ մեր գաւառի յարգոյ յաճախորդներուն և այսպէսով ստեղծել մեր շուրջը շրջանակ մը սրտերու, որոնք կրնան իրարու օգնելով ապրել կրքեւ քրիստոնեայ եղբայրներ. փորձը պիտի ցուցնէ ձեզ մեր պայմաններուն առաւելութիւնները:

Գործ ընել կը փափաքինք կարգ մը կարեւոր քաղաքներու հետ և այս նպատակաւ յայտարարութիւններ ղրկած եմք անոնց, որոնց պատասխանին կը սպասենք:

Մեզ որ եւ է կերպով աջակցողներուն խորին շնորհակալութիւննից կը յայտնենք և կը մնանք միշտ երախտապարտ,

Եղբայրստե՛ր Ընկերութիւն

Ք Է Օ Ֆ Թ Է Ր Ե Ա Ն Ե Ղ Բ Ա Ր Ց

Կ. Պոլսոյ Տեղեկութիւն

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԷՄԵՐՃԵԱՆ

1913 Յունվար 25

Մահմուտ Փաշա Մեծ Երթըզ խան  
Թիւ 14, Կ. Պոլիս



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ, ՊԱՅՄԱՆՆԵՐ.—ԹԱԼԻՖԻՅ համար, արեկան՝ 40 դիկ. արծ. վեցամսեայ՝ 20.—  
մէկ քիւ՝ 1 դիկ.:— **Արտապահում**՝ ար. ժր. 10, վեցամս. 5.—Վնարմաւն կանխիկ են:  
ՀԱՍՅԷ.—Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, 4. Պոլիս:

**GATOGHIGUÉ ARTZAKANK**

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻՐ.— 1.—Արձագանգ կը արտադրուի Շաքար օրեր: 2.— Խմբագրութիւնս պարսա-  
ւորեալ չէ անպատեհաւ կամ նոյնութեամբ արտադրուի, իրեն որչափ օ եւ է յօդուած: 3.—Կեղծանունով որչափ օ  
յօդուածներու հեղինակը կը պարտի իր ինքնական անունը ծանուցանել Խմբագրագլխին: 4.— Ձեռագիրներ եւ չեն  
դարձուի: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած թղթին վրայ կողմը միայն: 6.— Ծանուց-  
մանց համար մասնաւոր պայմանագրութեամբ կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տ է անհրա-  
ժեշտ երկու դանեկանի, նամակադրո՞ւմ ի միասին դրել:

ՏՊԱՐԱՆ, Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն է ի վիճակի է  
որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրաւիրագիրներ,  
բարդեր, բարդ-տետրեր, մանագրներ, եւն., եւն.: Գիւնէր **սնամրցելի** կերպով աման են: Գեղեցկագիտական նա-  
շակի եւ տպագրական մատուցման կողմանէ յանախորդները անհարակոյս գոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԹԻՒՆ «Տարական Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխա-  
նութենէ եւ կիրաւութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դիկն.:

## Ա. Զ. Դ.

Կը խնդրուի պատուարժան բաժանորդներէն, որոնց բաժա-  
նորդագրութիւնը կը վերջանայ ներկայ Փետրուար 10/ին, որ  
փութան նորոգել իրենց բաժանորդութիւնը, եթէ չեն ուզեր որ  
իրենց թերթի առաքումը յապաղման ենթարկուի: Իսկ ամիսէ մը  
պիտի դադարեցնենք թերթ առաքել անոնց որ մինչեւ ցայժմ  
բաժանորդագրուած չպիտի ըլլան: